Պակաս յուզմունք չէ առաջ բերել երկու կողմերի հայերի մէջ և մի այլ դէպք, որ տեղի ունեցաւ Կ Պոլսի մայր եկեղեցու մէջ։—Կ. Պոլսի պատրիարքը, անշուշտ ժողովրդի ցանկութեամբ, թոյլ էր տուել Օրմանեան սրբազանին պատարագել Կ. Պոլսի Գումգաբուի եկեղեցում. նա արդէն առաւօտեան պաշտամունքի կարգը կատարել՝ պատրաստւում էր պատարագ սկսելու, երբ յանուն յեղափոխութեան՝ մի քանի հոգի ստիպում են նորան դադարացնել պատարագը. և իմաստուն եպիսկոպոսը խոհեմութիւն է համարում տեղի տալ բռնութեան առաջ. փոխարէնը պատարագում է մի քահանայ։

Այս տարրի արարմունքի վրայ վրդոված է ազգի լուրջ և խոհուն դասը և սպասում է Կ. Պոլսի ամեն. պատրիարքի հրապարակական բացատրութեան։

ԼՈՒՐԵՐ

Ամսաթերթիս կանոնաւոր հրատարակութիւնը խանգարուեց այն հանգամանքով, որ թերթիս մայիս ամսի համարի համար շարուած նիւթերի մի մասի սրբագրութիւնն ու ձեռագրերը գտնւում էին մեր մի աշխատակցի մօտ, որ մի թիւրիմացութեան պատճառով բանտարկուեց անակնկալ կերպով և նորա հետ գրաւուեցան յիշեալ նիւթերը. այդ մասին խմբագրութիւնս յայտարարեց մամուլի միջոցով։ Այժմ, մեզ յաջողեց յետ ստանալ այն ամենը և խմբագրութիւնս կաշխատէ հասցնել պակաս համարները և նախկին կանոնաւորութեամբ հրատարակել «Լումայ» ամսագիրը։

Ազգիս վեհափառ Հայրապետը ս. Էջմիածնից բարեհաճեց այցելել Թիֆլիս. տեսակցեցաւ երկրիս իշխան կոմս փոխարքայի հետ և խօսակցութիւն ունեցաւ նորա հետ հայոց դպրոցական խնդրի առիթով և յուսադրուած մեկնեցաւ դարձեալ ս. Էջմիածին. Տէր Աստուած, որ այդ յոյսերն իրականութիւն ստանան մօտ ապագայում։

Առաջիկայ Սեպտեմբերի 12-ին ս. Էջմիածնում կատարուելու է մեռոնի օրհնութիւն, որի մասին «Արարատ» ամսագիրը պաշտօնապէս յայտարարել է՝ի գիտութիւն հայոց ազգի։